

ղանդաւոր զբող և բանաստեղծ Սիմբօրսկի, որ մի քանի տարի է արդէն ապրում էր Թիֆլիսում և աշխատակցում էր «Օրգօր» լրագրին և «Ֆալանգա» ծաղրական թերթին, անձնասպանութիւն գործեց, հրացանից իրան սպանելով։ Ասում են որ հանգուցեալը թողեց հետեւեալ տօմսակը. «Ես ինձ սպանում եմ, ոյժ չունենալով և անպատռութիւն համարելով ուրիշներին սպանելու»։ Փետրվարի 23-ին կատարվեցաւ հանգուցեալի թաղման հանդէսը։

ԳԱՆՉԱԿԻՑ երեցվոխան Ն. Տէր-Ներսէսեանց
խնդրում է մեզ տպել մեր Արագրում հետեւալ
հրաւերը՝ «Հրաւիրում եմ Ա. Յովհաննէս մայր
եկեղեցու ծխական ժողովրդականաց չնորհ բե-
րել առաջիկայ մարտ ամսի 1-ին գ.անձակի հոգե-
ւոր կառավարութեան ատեանը, 1880 թւի եկե-
ղեցական հաշւեմատեանը վերադննելու համար,
որ ներկայացրած եմ յիշեալ կառավարութեանը»:

Գաւառներից մեզ շատերը դիմում են խընդ-
րելով որ ուղարկենք այլ և այլ թատրօնական
սլիքաներ։ Կարծում ենք որ աւելի նպատա-
կայարմար կը լինէր գաւառացիներին դիմել այդ
տևսակ խնդիրքներով Թիֆլիսի հայոց թատրօ-
նական մասնաժողովին, կամ նրա նախագահ իշ-
խան Ամատունուն։ Խսկ խմբագրութիւնը ոչ մի-
ջոց, ոչ էլ ժամանակ ունի լրացնել գաւառացի-
ների առ առ համարներու

ԶԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են որ այդտեղ գրեթէ ամեն օր պատահում են մանր գողութիւններ մասնաւոր տներում, մանաւանդ հրաւերների, հարսանիքների և խնջոյքների ժամանակ,

Այս օրերու Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը
տօնեց, որքան մեզ յայտնի է իր դոյութեան
յիսուն և չորս տարվայ տարեղարձը: Տօնախըմ-
բութեան մանրամասները մեզ խոստաշան հա-
ղորդել: Միայն մօտաւորապէս լսեցինք որ Ներ-
սիսեան դպրոցը ունեցաւ այս տարի 40 հազար
բուրլ եկամուտ և 52 հազար բուրլ ծախս, ու-
րեմն 12 հազար բուրլ սկարտք ունի: Եւ այդ
բոլորը ինչի համար. այս տարի Ներսիսեան
դպրոցից դուրս եկան միայն 6 առաջնաւարտ
աշակերտներ վկայականով: Ուրեմն սարը մուկն
է ծննդը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

Neue Freie P

ՍԵՄՅԵՐՈՊՈԼԻՑ գրում են «Русскій Куръ-
еръ» Արագրին որ այդ քաղաքում կայ մի հայ
մանկավարժ Բ—ց, որ այդ քաղաքի օրիորդա-
կան զիմնազիայի 8-որդ դասատան մէջ մանկա-
վարժութեան դասեր է տալիս։ Ուստի Արագրի

Են ներկայացնում, բայց դարձեալ հիացնում ու
ապշեցնում են տեսող դիտող աչքն ու միտքը,
Ով լքեալ և ամայացեալ թագուհի, արիւնովդ
ողողված պատմուճանիդ կտորների վրա, ո-
րոնք ձըրձըրտված մարմնիու տակաւին կպած կա-
յին, տեսայ բազէների և ուրուրների զիշախան-
ձութեամբ ելեէջը, իւրաքանչիւրը ճանկել ու
ճանկում էր դարձեալ մի պատառ ու փախց-
նում: Աւ, այդ աղէկտուր ու միւս կողմէն ճիւա-
զական տեսարանի առջև, մտածել որ միայն կ-
երկու հատ արտանուքն ունէի միայն տկար զէնք,
մինչդեռ պէտք էր այնտեղ երկբերնի հրացանը:
Բայց զիշակեր բազէներն արտօնութիւն ունին
երկնքէն, իսկ ես որբա, ով մայր, իրաւունք ան-
գամ չունէի ձայնով լալու, զի բողոք և ապր-
տամութեն է համապատամ առ:

Ժամանակն ստիպում էր. վեց ժամ էինք զբ-
րել համելու համար. երեք կամ չորս ժամ ո-
շինչ էր այդ ողբոց քաղաքի սգաւոր մնածու-
թիւնքը տեսնելու համար. մնում էր մեղ ապ-
շանօք նայել և անցնիլ. Արագոտով, թասոն
շնչով և երեսս մինչ ի գետին խոնարհ ելայ կո-
միջնարերդը—բարձր բլուր, աւերակներով՝ որ-
պէս գիակներով ծածկուած. պարիսպ, ապարանք,
մատուռ՝ իրար վրա թաւալուած, իրար խառ-
նուած, իրենց մոխիրների մէջ իրար զրկած. և նո-
իրքի մի դառն հեղնութիւն, մի յուսահատ՝ մի տ-
ճիւաղական ծաղր, տեսնում ես պարսպի մի մի-
փէչ՝ ժամանակի ու վայրագութեան ճանկերէն ին-
կեղուած ու կեղեքուած՝ տակաւին մնումէ այս-
տեղ կանգուն. այնտեղ մի քառակուսի շինու-
թիւն՝ կիսափուլ մերկ պատերովը խայտառա-
կուած. աջիդ վրա, ձախիդ վրա տեսնում ես
բաներ, որոնք իրքի որ է քան ճանաչվելու
տուած նշաններն անուան եռու ու են Ա

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

Neue Freie P

Heseltine, Muriel

բարակարկառների տակ թաղուած. սուն ես ձզում՝ հսկայ լեռներ ոլորտի ես բերում՝ սարեր ու բլուրներ, իրենց ի ու կողերի վրա՝ ստուերի մէջ՝ մասու վանքեր կրելով. չուրջդ՝ քաղաքն ենց պաշարուած է ձորերով, այրերով ու ամժներով. չորրորդումը, հսկայ պարիսապնած են հիւսիսի դէմ և իրենց երկայն բազուկներով նաև բարձրութեանց վրաց մէջ գրկում են արեելքն ու արևմտան միայն, ով ղարճուրելի ժայռ՝ արծիւնել մատչելի, դու, հեթանոսականող ու բնոր մի խոր ու լայն ձորով բաժանուած էղ, հեռաւոր օղի մէջ քօղուած նստած է տաճարովդ. դու ես երեսում աչքիս եւ գ. և տաճարով խորհրդամած միզամած. սութիւնն այնտեղ ոսկիմայր Անտան հուրդն է կատարել տուել, քրիստոնէութիւնեղ սաղմոս է նուազել, և այսուուր չի այնտեղ արքայադստեր ապարանքն ուում. արքայադուստրը զաղտնի ճանապարքունիքն այնտեղ էր վսում. խորհրդան համար անդունդէն վեր ես ցցուայո. Ախուրիան իւր փրկուրներով ոտեղ քծնում ու խարիսխսդ է լիզում. հողի ն յետուստ փէշերդ են հաղորդվում, բարձրաբերձ ու համեմատ մարմնովդ ես յաւերժացած և եթերային մի քօղ ունի վայելչազեղ հասակդ. Օրդեօք մի մելու ես ունեցած ու տեսած զաղտն է, ով ժայռ, այդ զերեզմանաց քաղաքին մէջ.

թղթակիցը հետևեալ կերպով է նկարագրում իր խօսակցութիւնը Գամբետայի հետ գամբետան շափազանց տարօրինակ անձնաւորութիւն է։ Արան կախարդական ոյժին համարում։ Աս բարեկամական յարաբերութիւններ ունեի այդ երեւելի մարդու մք հետ, բայց մենք շատ քիչ ենք տեսնվել է այն ժամանակից, որ նա բնակվեց Յուրբոնեան պալատի մէջ։ Կա շատ անմատչելի է դարձել, թէպէտ նրա ընդունարանը միշտ այցելուներով լիքն է լինում և նրա քարտուղարները հազիւ են կարողանում պատասխանել ստացված նամակներին։ Որովհետեւ ի վերջին ժամանակներում թէ Ֆրանսիայի և թէ Եւրօպայի մէջ սկսեցին Վամբետույի մասին զանազան հրաշքներ պատճել, ես յաղթեցի իմ զգուածքը դէպի լավ են զնում, որ անկարելի է նրա միանաների և վարչութեան դրույան

բանները և վճռեցի տեսնվել այն տարօրինակ մարդու հետ, որի գուները երբէք չեն փակվել իմ տռաջ։ Աս ուղեռորվեցի Բուրբոննեան պալատը։ Ո՞քան զանազանութիւննեան պատեցի ես այն ժամանակից, երբ Ֆրանսիայի նախկին գիկտատօրը, հասարակ պատգամաւոր դառնալով, ասլրում էր Մօնտան փողոցի վրա փոքրիկ և համեստ կահաւորված սենեակի մէջ և միոյն մի ծառայէր պահում։ Այժմ նրա տան մուտքի մօտ պատուաւոր պահապաններ են կանգնած։ Ահազին նախասենեակի մէջ այցելուն պատահում է մի խումբ ծառաների պողպատեայ շղթաներով և սրերով, որոնք նրան տանում են ընդունարանը և նրա զալուատը յայտնում են իրանց տարոնին։ Ծնդունարանը զարդարված է գոյնզգոյն մարմարիօնով։ Ինձ անցկացրին շքեղ դահլիճներով մինչեւ նրա զրասենեակը, որտեղ զրասեղանի մօտ նստած է Գամբետա։ Նրա դէմքը նոյնչափ փոխվել է, որքան և ապրելու եղանակը։ Նրա ձայնը, խօսակցութիւնը նոյնն են մնանեւ, ուայ երիտասարդ

լւուքսան տացում, որ այսայս սրբութիւն զաւա-
գանի տակ, ամեն բան ամեն կողմից իրար վրա
վազում ժողովաւմ է և սաստիկ բորբոքուած ե-
թիակայութեանդ վրա ընկնում։ Արել լեռների
ետե հանգչելուն մօտեցել է. սարերի, ժայռերի
ու բոլոր ցցուն բաների ոտուերները երկայն-
վում ու ցնորական կերպարանք են առնում.
Դու դարձեալ նայում ես շուրջդ. ով դիմու-
թիւն. թաղապսակ ուրուականներ պալատների
քանդուածքներէն ելնում ու մտնում են. եկեղե-
ցիների ու մատուռների շուրջ վեղարաւորները
թափօր են զործում. պարխոպների վրա և փրլ-
փլած աշտարակների մէջ զինուորներն յետ ու
յառաջ վազում, դանաղան մարտուկան շարժում-
ներ են անում. փոսերի մէջ, քարակոյտերի վրա,
սիւների տակ անթիւ մարդիկ, մանր ու խոշոր,
այստեղ պար են գալիս, այնտեղ սուզ անում,
մի տեղ աղօթում, միւս տեղ հակառակում, այս
կողմ խնջոյք և փողի ու թմրկի ձայներ, այն
կողմ թշուառութեան հեծեծիւն. Ուրուականների
մի ամբողջ աշխարհ, Է՛լ կենալ կարող չես, քա-
ջութենէդ վեր բան է, մանաւանդ երբ մտածում
ես թէ այն հաղար ու մէկ խորչներէն ու խոռոչ-
ներէն կարող է յանկարծ դուրս պրծնել մի ա-
ւազակ, որ թաղաւորներէն վերջը ինքն է բնա-
կութիւն զրել այն աւերակների մէջ, և ինքն է
հարկ կամ կեանք պահանջողը այցելուներէն և
շատ անգամ երկուսը միասին.

Երբ ելանք քաղաքի դռներէն, արևն ամփո-
փում էր իւր ճառագայթները. փոքր ուշ էինք
մեացել. Մինչ մեր կառքը ճեղում էր դէպի
խօշավանք, և մինք երեսներս ետե դարձուցած
աշքով տակաւին անրաժան էինք աւերակներէն,
յանկարծ—ձախորդ հանդիպութիւն—ահոծ ու

չառը վեր վաղացին ստքիս մէջ բանաստեղով
տխուր տողերը.

Կորուցեր եմ թագաւորներ,
Ժողվիր եմ գըլխուս քոռ բըւեր.
Որ միշտ կերպեն—Անին անցաւ,
Անին անտէր աւերուեցաւ.

Ամփոփուեցայ կառքի անկիւնում, զլուխ
կուրծքիս վրա կախ և աչքերս փակ. Ո՞վ քա-
զաք, շատ էի կարդացել սպատմութիւններդ, թէ
ուրախդ թէ տխուրդ, բայց երբ տեսայ քեզ, նոր
միայն յատկապէս ուսայ թէ ինչ էիր և ինչ ես
Անի, ասել է մի ազգ, մի զօրութիւն, մի թա-
գաւորութիւն, մի ճոխութիւն, մի չքեղ ճարտա-
րապետութիւն, մի զուարթ բանաստեղծութիւն.
և Անի, ասել է մի անաղպութիւն, մի անկումն.
մի կործանումն, մի ամսյութիւն, մի քայքայեալ
պերճութիւն, մի տխուր խորհրդածութիւն. Յայց
քեզ ճանաչելն, ով քաղաք, պէտք է կարեկցու-
թիւն ծնանի քեզ ճամապ. Եթէ քու տեսիլդ թե-
լաղբելու չէ որբերիդ, որ նոքա իրենց բուփ
պէս հեծեծելը թողնեն, որի համար բանաստեղծը
իրաւամբ կշտամբում է նոցա, և զզալով իրենց
կոչումն ու պարտքը ժողովուին վէրքերդ պա-
տելու, էլ ուր ապա վիրաւոր կուրծքդ բաց և
արած նոցա առջն.

Արդէն բաւական հեռացել և իջնում էինք Ա-
խուրեանի ձորակը և մութն ընկնում էր, և Անի
ծածկուել էր մեր աչքէն.

Ա. Մ. Ե. Պ.